

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2024թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՅՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Յուրի Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ազատության պողոտայի հ.3 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՅՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յուրի Հարությունյանը ծնվել է 1944 թվականի մարտի 25-ին Կիրովաբադում (այժմ Գանձակ): 1972 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը: 1967 թվականից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես երաժշտական ձևավորող, ապա՝ երաժշտական խմբագիր: Հեղինակել է ավելի քան 70 ֆիլմերի երաժշտություն՝ «Մարդն Օլիմպոսից» (1974թ.), «Օգոստոս» (1976թ.), «Զինվորն ու փիղը» (1977թ.), «Կյանքի լավագույն կեսը» (1979թ.), «Խոշոր շահում» (1981թ.), «Մեր պապերի քայլերգը» (1980թ.), «Սիրամարգի ճիչը» (1982թ.), «Անիծվածները» (1991թ.), «Ձայն բարբառոյ» (1991թ.), «Ուրախ ավտոբուս» (2000թ.), «Խենթ հրեշտակը» (2000թ.), «Հերոստրատ» (2001թ.), «Տխուր փողոցի լուսաբացը» (2008թ.) և այլն: Գրել է նաև մի քանի վավերագրական ֆիլմերի երաժշտություն, որոնց թվում են «Հայկական ԽՍՀ», «Հայաստանն այսօր», «Կերամիկայի վարպետները», «Ինչպես է կոփվում արծաթը»: Հեղինակել է նաև Սիմֆոնիա (1984թ.), Արաբեսկներ, սիմֆոնիա պատկերներ, «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դարության» կանտատը (1970թ., Ե.Չարենցի տեքստերով), Գալարափողի կոնցերտ (2000թ.), 2 լարային կվարտետ (1968թ., 1970թ.), «3 իրիկնային երգ» (1971թ.), «Աշուն» (1972թ.) վոկալ շարքերը, 3 քաղաքային երգ (Լի Բոյի, Վ.Տերյանի, Մ.Մեծարենցի տեքստերով), «Տողեր Դավթի սաղմոսներից», 3 խմբերգ (Ա.Իսահակյանի տեքստերով), թատերական ներկայացումների համար երաժշտություն: 2004 թվականից եղել է Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության պատասխանատու քարտուղարը: Միությանը կից հիմնադրել է «Բրևիս» երաժշտական ծայնագրման ստուդիան, որի ղեկավարն է եղել: 2012 թվականին արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման: Նույն թվականին արժանացել է նաև «Հայակ» հայկական ամենամյա առաջին կինոմրցանակաբաշխության «Լավագույն կոմպոզիտոր» մրցանակին՝ «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» (1992թ.) ֆիլմի համար:

Յուրի Հարությունյանը մահացել է 2019 թ. օգոստոսի 23-ին Երևանում:

Յուրի Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ազատության պողոտայի հ.3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Յու.Հարությունյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների

իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ